ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2017 թվականի **թիվ 186** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրի ձեւի մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Մաքսային օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրի կից ներկայացվող ձեւը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2017 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 186 որոշմամբ

ՁԵՎ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության
լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրի

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության
լիազորված տնտեսական օպերատորների ռեեստր

Այն երկիրը, որի մաքսային մարմնի կողմից տրվել է ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու մասին վկայականը[1] (այսուհետ՝ վկայական)	Տեղեկություններ վկայականի մասին				
	իրավաբանական անձին ռեեստրում ընդգրկելու ամսաթիվը	վկայականի համարը	վկայականի տիպը [2]	վկայականն ուժի մեջ մտնելու ամսաթիվը	վկայականի գործողության կարգավիճակը [3]
ՀՏ	ՀՏ	ՀՏ	ՀՏ	ՀՏ	ՀՏ
1	2	3	4	5	6

Տեղեկություններ՝ լիազորված տնտեսական օպերատորի (իրավաբանական անձի) եւ դրա առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների (մասնաճյուղերի) մասին					
լրիվ անվանումը	կրճատ անվանումը [4]	հարկային համարը [5]	գտնվելու վայրը	փաստացի հասցեն [6]	մասնաճյուղի հատկանիշը [7]
ՀՏ	ՀՏ	ՀՏ	ՀՏ	ՀՏ	ՀՏ
7	8	9	10	11	12

Տեղեկություններ լիազորված տնտեսական օպերատորի այն շինությունների, սենքերի (սենքերի մասերի) եւ (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) մասին, որոնք նախատեսված են օգտագործման համար կամ օգտագործվում են ապրանքների ժամանակավոր պահպանման (այսուհետ՝պահպանման վայրեր) համար						
պահպանման վայրի անվանումը	պահպանման վայրի փաստացի հասցեն	պահպանման վայրի մակերեսը[8] (մ^2)	պահպանման վայրի օգտագործման հիմքը			
			օգտագործման հիմքի ծածկագիրը [9]	օգտագործման հիմք հանդիսացող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը	օգտագործման իրավունքն սկսելու ամսաթիվը	օգտագործման իրավունքն ավարտելու ամսաթիվը
ՀՏ	ՀՏ	ՀՏ				
13	14	15	16	17	18	19

Տեղեկություններ այն մաքսային մարմինների մասին, որոնց վերապահված է պահպանման վայրերի հսկողությունը				Տեղեկություններ[10]պարտավորությունների կատարումն ապահովելու մասին (այսուհետ՝ ապահովում)			
այն մաքսային մարմնի ծածկագիրը, որի գործունեության տարածաշրջանում է գրանցված պահպանման վայրը	մաքսային հսկողության գոտու համարը կամ դրա ստեղծումը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը	մաքսային հսկողության գոտու ստեղծման ամսաթիվը	մաքսային հսկողության գոտու վերացման ամսաթիվը	ապահովման եղանակը	ապահովման փաստաթղթի համարը եւ ամսաթիվը	ապահովման փաստաթղթի գործողությունն սկսելու ամսաթիվը	ապահովման փաստաթղթի գործողությունն ավարտելու ամսաթիվը
ՀՏ	ՀՏ						
20	21	22	23	24	25	26	27

Տեղեկություններ՝ վկայականի գործողությունը կասեցնելու եւ վերականգնելու մասին				Տեղեկություններ՝ ռեեստրից հանելու մասին	
վկայականի գործողությունը կասեցնելու մասին փաստաթղթի համարը եւ ամսաթիվը	վկայականի գործողությունը կասեցնելու ամսաթիվը	վկայականի գործողությունը վերականգնելու մասին փաստաթղթի համարը եւ ամսաթիվը	վկայականի գործողությունը վերականգնելու ամսաթիվը	ռեեստրից հանելու մասին փաստաթղթի համարը եւ ամսաթիվը	ռեեստրից հանելու ամսաթիվը
	ՀՏ				
28	29	30	31	32	33

[1]Երկրի ծածկագիրը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի «Մաքսային հայտարարագրերի լրացման համար օգտագործվող դասակարգիչների մասին» թիվ 378 որոշմամբ հաստատված՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան (Հավելված թիվ 22):

[2]Ունի հետեւյալ նշանակությունները՝

1՝ առաջին տիպի վկայական.

2՝ երկրորդ տիպի վկայական.

3՝ երրորդ տիպի վկայական:

[3]Ունի հետեւյալ նշանակությունները՝

02՝ գործում է.

03՝ կասեցվել է.

04՝ վերականգնվել է.

05՝ դադարեցվել է:

[4]Լրացվում է լիազորված տնտեսական օպերատորի (իրավաբանական անձի) կրճատ անվանման առկայության դեպքում:

[5]Ունի հետեւյալ նշանակությունները՝

ՀՎՀՎ՝ հարկ վճարողի հաշվառման համարը (Հայաստանի Հանրապետության համար).

ՎՀՀ՝ վճարողի հաշվառման համարը (Բելառուսի Հանրապետության համար).

ԲՆՀ՝ բիզնես-նույնականացման համարը (Ղազախստանի Հանրապետության համար).

ՆՀՀ՝ նույնականացման հարկային համարը (Ղրղզստանի Հանրապետության համար).

ՀՎՆՀՀ/ՀԿՊԾ՝ հարկ վճարողի նույնականացման համարը/հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (Ռուսաստանի Դաշնության համար):

[6]Չի լրացվում Բելառուսի Հանրապետությունում, ինչպես նաեւ փաստացի հասցեն՝ լիազորված տնտեսական օպերատորի (իրավաբանական անձի) գտնվելու վայրի հետ համընկնելու դեպքում:

[7] Նախատեսված է առանձնացնելու համար լիազորված տնտեսական օպերատորին (իրավաբանական անձին), ըստ «0» հատկանիշի առկայության, դրա առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներից (մասնաճյուղերից)՝ ըստ դրանց բնական շարքի թվերի (սկսած 1-ից բաղկացած արժեքներով) հատկանիշների առկայության:

[8]Պահպանման վայրի մակերեսի արժեքը նշվում է որպես թվային տասանիշ իրական արժեք՝ ստորակետից հետո երկու նիշերով:

[9] Ունի հետեւյալ արժեքները՝

01՝ գտնվում է սեփականության ներքո.

02՝ գտնվում է վարձակալության ներքո.

03՝ գտնվում է տնտեսավարման ներքո.

04՝ գտնվում է օպերատիվ կառավարման ներքո:

[10] Չի լրացվում երկրորդ տիպի (բացառությամբ ապրանքների արտադրության գործունեություն իրականացնող եւ (կամ) ապրանքներ արտահանող այն իրավաբանական անձանց, որոնց ֆինանսական կայունությունը սահմանված արժեքներին չի համապատասխանում) եւ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ իրավաբանական անձին ռեեստրում ընդգրկելու դեպքում:

Ծանոթագրություն: «ՀՏ» (հանրային տեղեկություններ) նշում ունեցող տեղեկությունները Եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից զետեղվում են իր պաշտոնական կայքում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում: